

դարձակ պատմութիւնը (գրախօսած՝ Հ. Վ. Ինգլիզեան). 365:

Կորիւն, Վարք Մաշտոցի, ուղղեալ եւ լուսաբանեալ ի Գառնիկ Ֆնտգլեանէ (գրախօսած՝ Հ. Ն. Ա.). 227:

Frazer J. G., Le dieu qui meurt (գրախօսած՝ Հ. Ա. Գարամանլեան). 693:

Nioradze, Begräbnis- und Totenkultus bei den Chewsuren (գրախօսած՝ Հ. Ա. Գարամանլեան). 366.

Տօնակարգ Հայաստանեայց Եկեղեցւոյ (գրախօսած՝ Հ. Գ. Հեպոյեան). 542:

Վասպուրական (գրախօսած՝ Պ. Է.). 695:

Winkler H., Salomo und die Karina (գրախօսած՝ Հ. Ա. Գարամանլեան). 698:

maßen (besprochen von P. V. Ingli-sian). 365.

Koriun, Leben des Maštotz (besprochen von P. N. A.). 227.

Frazer J. G., Le dieu qui meurt (besprochen von P. A. K.). 693.

Nioradze, Begräbnis- und Totenkultus bei den Chewsuren (besprochen von P. A. Karamanlian). 366.

Die liturgischen Gesänge der armenischen Kirche (besprochen von P. G. Heboyan). 542.

Waspurakan (besprochen von P. E.). 695.

Winkler H., Salomo und die Karina (besprochen von P. A. K.). 698.



ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 10-12 ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԽՁ. ՏԱՐԻ 1932

ԵՂԻՉԷ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԻ ԻՒՐ ՊՈՏՄՈՒԹԻՒՆՆ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՔՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՒՆ

(Շարունակութիւն):

32. ՍՊԱՐԱՊԵՏՔ ՀԱՅՈՑ

Կը գրէ Եղիշէ (Ա. 7). «Եւ իբրեւ զնա (զԱրաաշէս որդի Վրամշապոյ) եւս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն ժեաց անկանէր քաղաքորութիւնն. զի Բէ-Հայոց անկանէր քաղաքորութիւնն. զի Բէ-պէտ եւ գանձն յարժուին Պարսկաց երբայր, սակայն այրուին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»:

Խօսքը «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն» պէտք է անշուշտ այն իմաստով հասկնալ թէ զինուորական ոյժը Հայ նախարարներու ձեռքը մնաց, թէպէտ երկիրը արքային հարկատու եղաւ, ինչ-պէս յաջորդ նախարարութիւնը՝ «այրուծին պէս յաջորդ նախարարացն առաջնորդէր ի պատերազմի» ենթադրել կուտայ:

Իւրաքանչիւր նախարար կը հանէր պատերազմի ժամանակ որոշ թուով այրուծի, ի հարկաւորութեան նաեւ հետեւակ զօրք, որուն կ'առաջնորդէր անձամբ: Այս գունդերը, որոնք ի միասին կը կազմէին Հայկական բանակը, ունէին ընդհանուր հրամանական բանակը, որ «իշխան սպարապետութեան, տար մը, որ «իշխան սպարապետութեան, զօրավար Հայոց աշխարհին¹» կամ «մեծ սպարապետ Հայոց» տիտղոսը կը կրէր:

Սպարապետ (նաեւ Ասպարապետ) նպ. sipahbad, պահլ. spāhpat կ'ենթադրէ հինսլ. *spādapati. Ասպարապետ ձեւը Սասանեանց օրով նոյն բառին նոր փոխառութիւնն է (Hübschmann, Arm. Grammatik, էջ 240): Ծն. ԻՖ. 22 սպարապետ թարգմանուած է

յուն. ἀρχιστρατήγος. իսկ στρατήγοςը Կորիւն կը հայացնէ սպարապետ (պահլ. spāhpatէն), այլուր իբրեւ համազօր գործածուած՝ սպարապետ եւ զօրագլուխ:

Սասանեան պետութեան մէջ մինչեւ Սոսրով Ա. պետական բանակը նոյնպէս ենթարկուած էր գլխաւոր հրամանատարի, որ կը կոչուէր Արեաց սպարապետ (Erānspāhbedh)². սպարապետութիւնը երանեան եօթը մեծ տոհմերէն մէկուն տոհմական ժառանգութիւնն էր: Անոր գործունէութիւնը աւելի ընդարձակ սահման ունէր քան որ ունի մեր օրով զօրավար մը: Երեքսպարիկ պաշտօն ունէր Երան-սպարապետը. պատերազմական նախարար էր, ընդհանուր հրամանատար եւ խաղաղութեան բանազնաց: Այնու որ պետական զինուորական ոյժի կազմակերպութիւնն եւ վարչութիւնն իր ձեռքն ունէր, ունէր միանգամայն բարձր բարձ արքայական խորհրդատուի վերջին մէջ: Բնականաբար նախարար մ'ըլլալու հանգամանքով իր իշխանութեան տակ կը գտնուէր ամբողջ պետութեան պատերազմի նախարարութիւնը:

Արեաց սպարապետութեան մէջ նշանակալից փոփոխութիւն տեղի ունեցաւ երբ Սոսրով Ա. Անուշիրուան լուծեց Արեաց սպարապետի պաշտօնն եւ Պետութեան չորս աշխարհամասերու համար նշանակեց ուրոյն սպարապետներ:

Նոյնն էր առանց տարակուսի նաեւ Արշակունեաց օրով Հայոց սպարապետն, որուն հրամանատարութիւնը կը տարածուէր պետական բովանդակ զինուորական ոյժին վրայ: Երբ բաժնուեցաւ Արշակունեան Մեծ Հայաստանը, եւ յետոյ նախ Յունական եւ ապա Պարսկական բաժնին մէջ զազրեցաւ թագաւորութիւնը, մնաց անխախտ Հայկական բա-

² A. Christensen, L'Empire des Sassanides, p. 36-37: Եղիշէ, Թ. 152 կ'անուանէ նաեւ «մեծ սպարապետ»:

¹ Ազաթ., էջ 414:

էր, նոյն Գիրգորէն կը կոչուի «պատգամաբեր արքային եւ հաւատարմագոյն մտերմացն ընդ Բագովայ»: Այս տեղիքները³ կը յայտնեն պարզ կերպով, թէ ի՞նչ կ'իմանային հին Պարսիկները հազարապետ յորջորջմամբ, այս ինքն՝ պատգամաբեր արքայի, հրաւանատար, նուիրակ: Ուշադրութեան արժանի են այս ըմբռնմամբ Եղիշէի տողերը, զորոնք կը դնէ մոզակտի բերանը. «ես գրեմ եւ ցուցանեմ ի դուռն Մովսէստան մովսէտի եւ դերանդերձապետի եւ մեծ հազարապետին, զի ածցեմ զարքայ ի հաւանութիւն» (էջ 47):

Տարբեր տիպոս է hazârabanda, որ հնչմամբ շատ նման է հայերէն հազարապետի, բայց իմաստն է «հազար սորուկի տէր»․ այս տիպոսը կ'ահնարիկէ Թէոքորեսոս⁴, երբ կը գրէ թէ Տօսդոն չիւն ունէս յաւանութիւն, որ հայերէն թարգմանուած է «զոմն մի այլ ի մեծատուն իշխանացն Պարսից քրիստոնէայ, որ ունէր ծառայս հազար, որոյ անունն էր Սահն⁵»:

Հազարապետ իբրեւ hazârabatis հայերէնի մէջ անշուշտ փոխառութիւն է պահլաւերէնէ, եւ ունէր նոյն այն իմաստը, ինչ որ տեսանք հին պարսիկներու քով: Բայց յընթացս դարուց ստացած է կեանքի մէջ աւելի ընդարձակ նշանակութիւն, ինչպէս դիւրին է տեսնել Ե. եւ Զ. դարու հայ մատենագրութեան մէջ յաճախ գործածութեան:

Ս. Գրոց թարգմանութեան մէջ հետեւեալ առումներով գործածուած է բառս․

ա. Բառական թարգմանութիւն յունարէն չիւարոս բառին, իբրեւ զլուի հազար զինուորի․ այսպէս Ելք ԺԸ. 21, 25. Թիւք Ա. 16. ԼԱ. 14 եւն. Բ. Օրէնք Ա. 15. Յետու ԺԲ. 14 եւն. Ա. Թգ. Ը. 12. ԺԸ. 13. ԻԲ. 7. Բ. Թգ. ԺԸ. 1. Յուդիթ ԺԳ. 7. Ա. Մակ. Գ. 55. Չաք. Թ. 7. ԺԲ. 5 եւն: Հմմտ. եւ Հազարապետութիւն չիւարչիա Թիւք ԼԱ. 48. Ա. Մակ. Ե. 13. «գորավարք եւ հազարապետք»: Ոսկ. Մատթ. 62. «եթէ անկած ոք իցէ եւ թագաւոր լիցի, կարող է հազար»:

³ Հմմտ. J. Marquart, Untersuchungen zur Geschichte von Eran, Philologus, 55 (1897), էջ 227—235. Հայերէն թարգմանութիւնը Հանդէս Ա. մ. ս. օրեւոյ, 1898, էջ 316—320:
⁴ Պատմ. Եկեղ., Ե. 39:

⁵ Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց, Ա., էջ 3: Nöldeke, Tabari, 76, ծ. 2 եւ 438, ծ. 4 անունս կ'ուզէ կարգաւ Տօս<օ>դոն, այն է Սուրէն. P. Peeters կը տեսնէ հոն Շահէն մը. Analecta Bollandiana, 28 (1903), էջ 406:

րապետութիւնս տալ ում եւ կամ իցի». Ոսկ. Պաւղ. Ա. 541:

բ. Յուն. ἐπίτροπος, վերակացու, կառավարիչ, այսպէս Բ. Մակար. ԺԱ. 1. Դուկ. Ը. 3. Գաղատ. Դ. 2:

գ. Յուն. ἑπαρχος, հրամանատար, վերակացու. այսպէս՝ «հազարապետն դրեակ բերդին» = τὸν τῆς ἀχροπόλεως ἐπαρχου. Բ. Մակ. Դ. 27:

դ. Յուն. οἰκονόμος, տնտես. այսպէս Գ. Թգ. ԺԸ. 3. Դ. Թգ. ԺԸ. 18, 37. ԺԹ. 2. Իսկ Գ. Թգ. Դ. 6 «Աքիսար էր հրամատար (οἰκονόμος) եւ էլիւսի հազարապետ (Ἐλιάχ ὁ οἰκονόμος) եւ էլիւսի որդի Սաիայ շահապ» (ἐπί τῆς πατριάς). Ա. Կոր. Դ. 1 եւն: Հմմտ. եւ հազարապետութիւն οἰκονομία Ես. ԻԲ. 21: Այս իմաստով է «արար (գՅուգա) հազարապետ քսակակալ» Եփրեմ Բ., էջ 146. «Թէպէտ եւ հազարապետք անօրէնք իցեն, սակայն ինքնին հազարապետութեանն ճշմարիտ է տեսնութիւն». անդ, էջ 147. «քաջատեսուչ հազարապետ». Չգօն, էջ 340. «ի տան ուրեք ոչ միայն ընդ հաւատարիմն լինելոյ ունի շնորհ հազարապետ ոք տեսն». Ոսկ. Պաւղ. Ա. 25. «հազարապետք յորժամ տեսանիցեն զծառայս տերանց իւրեանց ի ստահակութեան». Ոսկ. Ես., էջ 351:

ե. Վերոյիշեալ իմաստով գործածուած է «հազարապետ» նաեւ հետեւեալ տեղերը՝ Ծն. ԽԳ. 16. ԽԴ. 1 եւ 4. ուր յոյնն ունի τῶ ὄντι ἐπὶ τῆς οἰκίας. Իսկ Յուդիթ ԺԲ. 10 «որ էր հազարապետ հաւատարիմ ի վերայ ամենայն ընչից նորա» յոյնն ունի. ὅς ἦν ἐφεστραχώς ἐπὶ παντῶν τῶν αὐτοῦ.

Հազարապետ բառին այս պէսպէս առումները ցոյց կու տան, թէ ինչպէս մուտ գտած է այն առօրեայ կեանքին մէջ. ըստ այսմ, տան, կալուածքի, ընչից մատակարարութեան վերատեսուչը կամ տնտեսը հայ ժողովրդեան ըմբռնմամբ հազարապետ է. նոյնպէս հազարապետ է բերդի մը ընդհանուր հրամանատարը, պատասխանատուն. այսպէս նաեւ բանակին մէջ կան ստորաբաժանումներ՝ տասնապետ, հարիւրապետ եւ հազարապետ:

Հազարապետ սովորական առումէն գատ ունէր նաեւ պետական կազմին մէջ առանձին իմաստ, որով կը յարաբերուէր պաշտօնական-զինուորական մարմին մը: Այս առումը պարզ եւ բացայայտ կը տեսնուի Փ. Բիւզանդի քով, որ կը գրէ Արշակի գահակալութեան առթիւ.

«Եւ նորագեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս եւ զառաջինն. մեծամեծք յիւրաքանչիւր զահու եւ զործակալքն յիւրաքանչիւր շափու: Եւ սկիզբն զործակալութեանն հազարապետութեանն աշխարհատեսն ինամակալութեանն, աշխարհաչէն աշխարհատած դեհարութեան, շինականաչէն ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին» (Դ. 2):

Փաւստոսի այս տողերը սքանչելի ճշգրտութեամբ վեր կը հանէ հազարապետին դերը. բայց, ինչպէս ինձ կը թուի, անվթար չէ հարայց, ինչպէս ինձ կը թուի, անվթար չէ հարայց, ինչպէս ինձ կը թուի, անվթար չէ հարայց: Որովհետեւ հազարապետն էր, կը սպասուէր հոս Գնունեացի փոխարէն Ամատունեաց ընթերցուածը: Նման խանգարում մը կը տեսնուի նաեւ Փաւստոսի հետեւեալ տողերու մէջ, ուր կ'ըսուի, թէ Տիրան թագապետ մէջ, ուր կ'ըսուի, թէ Տիրան թագապետ մէջ, ուր կ'ըսուի, թէ Տիրան թագապետ մէջ, ուր կ'ըսուի, թէ Տիրան թագապետ մէջ: Նման խանգարում ըստ ստանդարտ «գեթեմաճեմ» զմեծ հազարապետն փորութեան օրինակին՝ զմեծ հազարապետն ի հազարապետութեանն իսկ ի տոհմէ ամենայն Հայոց մեծաց՝ զՎաղարշ որ էր իշխան Անձուայ եւ ընդ նմա... եւ զԱբա իշխանն Գնունեաց: Չնոսա զամենեսեան հրամայեաց Երթալ ընդ մեծի հազարապետին Վաղարշու» (Գ. 12): Ուղեկիցներու թուին մէջ չէ միշտուած Ամատունեաց նախարարը. բայց ծանօթ է այլուստ թէ ասիկա նման դէպքերուն միշտ մասնակցութիւն բերած է⁶:

Վերջին պարբերութեան կը տեսնուի թէ «մեծ հազարապետն ի հազարապետութեանն Վաղարշն է, որուն տոհմանունը կամ լուծած է եւ կամ գուրս ձգուած եւ պէտք է լրացնել «որ էր իշխան տանն Ամատունեաց» յաւելուածով⁷: Ամատունիները աւագ նախարարութեանց շարքին կը յիշուին միշտ, եւ չէ կարելի ենթադրել թէ հոս բացակայած ըլլան: Ազաթանդեղոսի (էջ 115) Օտայի համար կը գրէ. «յլէին անդը (ի Վիրապն) նախարար զոմն աւագ, որոյ անուն Օտայ կոչուի»:

⁶ Յունական նախատիպութեան հետք առ Դանիէլ ասորի ուղարկուած նախարարներու թուին մէջ է «Կարէն իշխանն Ամատունեաց» (Բիւզ., Գ. 14). եւ Ներսէսին ընկերաց իշխաններու թուին մէջ կը յիշուի «Պարգեւ իշխանն տանն Ամատունեաց» (Գ. 4):
⁷ Բնագիրը կը կարգաւ «Բայց զուարթաց զնախարարն ըստ սովորութեան օրինակին՝ զմեծ հազարապետն ի հազարապետութեան զՎաղարշ որ էր իշխան տանն Ամատունեաց: Իսկ ի տոհմէ տոհմէ ամենայն Հայոց մեծաց՝ զՎաղարշ, որ էր իշխան Անձուայ»:

չէր»: Ազաթանդեղոսի Ե օրինակն ունի «նախարար զոմն ամատունի, սնուցող մեծին խորովիլիտոյ եւ իշխան Անոյ ամրոցին, որում անուն Աւտայ կոչէր»: այսպէս նաեւ խոր. Բ. 83 «Օտայ, որ էր ի տոհմէն Ամատունեաց եւ սնուցող խորովիլիտոյ»: Յանձնարարութիւնը, որ կ'ըլլայ Օտայի, ցոյց կու տայ թէ նա մեծ հազարապետն էր Տրգատայ: Նոյնը կը տեսնուի նաեւ Կորիւնէն, որ զինուորական կարգէն կը յիշէ զՎահան Ամատունի հազարապետն Հայոց մեծաց: Կը հետեւցնեմ ասկէ, թէ հազարապետութիւնը Ամատունեաց տոհմին ժառանգութիւնն էր: Այս հիմամբ պէտք է ուղղել նաեւ Փաւստոսի առաջին պարբերութեան «չինականաչէն ազգն Գնունեաց» բառերը, ոչ միայն վասն զի անձա է «չինականաչէն» բառը եւ անպատշաճ դասական հեղինակի մը, այլ եւ նորանշան կը հնչուի «ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին». ազգ մը չէր կրնար բովանդակ երկրին հազարապետն ըլլալ⁸: Պանդարտումը կ'ընթացէ Կ. զոր կ'առաջարկեմ՝

ՇԻՆԱԿԱՆԱՇԵՆ ԱԶԳԻՆ ԳՆՈՒՆԵԱՑ

Կարգալ՝ ՎԱՂԱՐՇ ԻՇԽԱՆ ԱԶԳԻՆ ԱՄԱՏՈՒՆԵԱՑ

Եթէ հազարապետութիւնը որոշ տոհմի մը սեպհականութիւնն էր, այդ տոհմը միայն Ամատունեացը կրնար ըլլալ. վասն զի ունինք Կորիւնէն Ե. դարու առաջին կէսի (440) համար յայտնի վկայութիւն, թէ «Հայոց մեծաց հազարապետն» է Վահան Ամատունի:

Փաւստոսի համաձայն հազարապետը պաշտօն ունի հսկելու «աշխարհատեսն ինամակալութեան, աշխարհաչէն եւ աշխարհատած դեհարութեան». նոյն իմաստով կը գրէ նաեւ Եղիշէ (19) թէ «որ հազարապետ աշխարհին էր՝ իբրեւ զհայր վերակացու հազարապետն էր աշխարհականաց քրիստոնէից»: Կորիւն հազարապետութիւնը զինուորական կարգ կը համարի: Ազաթանդեղոսի վկայութեամբ երբ լուր հասաւ թէ Գրիգոր Վիրապի մէջ զեռ կենդանի է, արքունիքէն կ'ուղարկուի «նախարար ոմն աւագ» Օտայ անուն, հոգալու բանտարկելոյն մասին: Այս կէտը աւելի կը պարզուի Թագէտի եւ Սանդուխտի

⁸ Հ. Ղ. Ալիշան, Այբարատ, 419, յեցած Փաւստոսի այս տեղւոյն վրայ, կը գրէ. «այլ նշանուոր եւ չ'այսնութիւն փոխանցութեան զերազայնին այնմ (իմա՞, այնք) պատուոյ ի տոհմն Գնունեաց, ոչ գիտեմ աս ի՞նչ սոցին երախտեաց»:

Հայոց մաղխագն եւ սպարապետը կը յիշուին, հազարապետի յիշատակութիւնն էլ եղած, վասն զի պարսիկ էր եւ չէր մասնակցած ժողովին:

Հազարապետութեան Հայոց ձեռքէն ստուռիւն եւ պարսիկներուն յանձնումը, որ տեղի ունեցած է Ձ. դարու երկրորդ քառորդին, կը յիշէ Եղիշէ (էջ 19), երբ կը թուէ մի առ մի Պարսիկներու կողմէն Հայոց վրայ ի գործ դրուած ճնշումները. «եւ եւս չարագոյն հինգերորդն. քանզի որ հազարապետ աշխարհին էր՝ իբրեւ զհայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից. դրզուեաց յարոյց (Դենչապուհ) զամբատանութիւն ի վերայ նորա. եւ հանեալ գնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ամ յաշխարհն»:

Խօսքը Դենչապուհի մասին է, որուն մարզպանութեան տարիները դժբախտաբար կարելի է նուսողական ճշգրտութեամբ ստուգել. վերագոյն զետեղեցինք զայն 554—564 տարիներուն մէջ, առանց այսու ժխտելու թէ աւելի կանուխ՝ Նիխորականէն յառաջ չ'իյնար անոր Հայաստան գալը: Ծնչուցները, գործնք կը թուարկէ Եղիշէ, անշուշտ ժամանակի մը ընթացքին մէջ տեղի ունեցան. եւ այն հաւանորէն 546—551 տարիներու ընթացքին, երբ հայ նախարարները հեռաւոր վրկանի մէջ կը գտնուէին իրենց հեծելազօրքով. եւ Խոսրով զբաղած էր Հեփթաղներու գէմ մղուած կռիւներով: 552ին կռիւները ի նպաստ Պարսից վերջացան. եւ ունեցաւ այնուհետեւ յաղթական արքայից արքայն ժամանակ զբաղելու երկրին ներքին հոգերով, ի մէջ այլոց Հայաստանէն լուծած սթգոհութիւններով: Այս նպատակաւ ալ ուղարկուեցաւ երեք անգամէ բաղկացեալ քննիչ յանձնաժողով մը, որ եկաւ Գուգին եւ շատ ուղղութիւններ ըրաւ: Եղիշէի տողերէն չ'երեւար, թէ հազարապետութիւնը կրկին հայ նախարարի վերադարձուած ըլլայ: Այս թուականէն վերջը Հայոց հազարապետ չի յիշուիր պատմութեան մէջ:

Հազարապետութեան բարձումը Ե. դար փոխադրել, ինչպէս սովորութիւն էր մինչեւ այժմ յեցած Եղիշէի վրայ, հակասակ է ուղիղ ժամանակագրութեան: Ե. դարուն այս մասին որ եւ իցէ կարգազրուութիւն չէր եղած Բարձրագոյն Դունէն: Եւ վասան Մամիկոնեան, որ մի առ մի կը թուէ Հայոց սթգո-

հուլեան պատճառները, եւ ոչ թեթեւակնարկութիւն մը կ'ընէ հազարապետութեան Հայոց ձեռքէն խլուելու մասին, թէ եւ կը յիշէ շատ մը կարեւոր պաշտօններու անարժաններու յանձնուելը:

Ընդ հակառակը վասակի խօսքերէն կ'իմացուի, թէ մարզպանութեան Հայոց յանձնուելէն ետքը կարգ մը գործակալութիւններ, որոնք կը գտնուէին Պարսիկներու ձեռքը, վերադարձուեցան Հայոց:

Այս կէտի մէջ եւս կու գանք այն համոզման, թէ Եղիշէի ակնարկութիւնները նկատմամբ Հայոց հազարապետութեան պարսիկներու յանձնուելուն, կը հային Ձ. դարու երկրորդ քառորդին:

34. ՄԱՂԱՍԻՔ ԷԱՅՈՑ

Ե. եւ Ձ. դարու հայ պատմագիրներու քով ստէպ կը հանդիպինք Մաղխագ, Մաղխագուքիւն, Մաղխագուքեան, Մաղխագուքեան տուն յորջորջանքի, որ յատուկ է Խորխոռուեաց տան տանուտէրներուն: Իմաստը կարօտ է լուծման: Յառաջ քան խնդրոյս լուծումը փորձելը կարեւոր կը համարիմ համախմբել հոս մատենագրական ծանօթ տեղիքները.

ա. Ազաթանգեղոս թուելով «զգլխաւորս նախարարացն եւ զկուսակալս աշխարհացն» Հայաստանի, որոնք իբրեւ շքադիրներ ընկերացած են Գրիգոր Լուսաւորչին զէպի Կեսարիա, կը յիշէ իբրեւ հնգետասաներորդ բարձ «իշխանն Մաղխագուքեան տանն»¹:

բ. Բիւզանդ Յուսիկի հետ զէպի Կեսարիա ուղեկից նախարարներու թուին մէջ կը յիշէ «ՄԱՆԱՍՊ Խորխոռուեաց իշխանն Մախագուքեան տանն» (Գ. 12): Արշակ թագաւորէն առ վաղէս կայսր ուղարկուած իշխաններէն մէկն էր «ԳԱՐՁՈՅԼ մաղխագ նահապետն Խորխոռուեաց» (Գ. 11): Նոյն «Գարջոյլ մախագն» է որ Զարմանդուխտ դշտյի եւ Մանուէլ Մամիկոնեանի կողմէն Պարսից Շապուհ թագաւորին կը զրկուի զեսպանութեամբ եւ ապա «եկն եհաս Գարջոյլ Խորխոռուի յերկիրն Հայոց» (Ե. 38): Դիւ յետոյ «Գարջոյլ մախագ» կ'իյնայ Մերուժանի զէմ

¹ Ազաթ. 414 եւ 460: Ազաթանգեղոսի յունարէն թարգմանութիւնը ունի ստաջին տեղեքը՝ τὸν ἀρχοντα Μαλχαζιδῶν եւ երկրորդը՝ ἀρχων ὁ τοῦ Μαλχαζιδῶν, հրտ. Lagarde, էջ 83 եւ 98. Արարեքէն ունի պարզապէս «զիշխանն Խորխոռուի». հրտ. Ն. Մանի, էջ 115:

մղուած պատերազմին մէջ եւ «բերին... զմարմին Գարջոյլայ մախագու Խորխոռուեայ» (Ե. 43):

գ. Շահապիվանի ժողովը գումարուած է Յաղկերա երկրորդի ժ. տարւոյն (448|9), ի ժամանակ «վասակայ Սիւնեաց մարգպանութեանն Հայոց եւ վահանայ Ամատուն վրձնութեանն» Խորխոռուեաց մախագութեանն» (Զեռ. վիեննայի Միխիթ. Մատ. Թ. 581):

դ. Նոյն վրեւը կը յիշէ Ղ. Փարպեցի՝ «Վրիւ մախագ» (45): Ե. դարու երկրորդ կէսին կ'իյնան «ի տոհմէն Խորխոռուեանի» (64, Գաղիչոյ) (47). «ՆՈՐԻՆ Խորխոռուեանի» (64, 65), «յազգէն Խորխոռուեաց երանելին Խորէն» (72). «երանելին մախագն Խորէն» (72). Մախագն ԳԱՂԻՇՈՅ Պերողի օրով (113, 116, Մախագն ԳԱՂԻՇՈՅ «ստացեալքը մախագու» (113, 114). ԳԱՐՁՈՅԼ մախագ (123, 124):

ե. Յանուն Սահակայ հրապարակ հանուած Գահնամակին մէջ հայ նախարարներու շարքին առաջին բարձն ունի «իշխանն Հայոց եւ մախագն»². Իսկ Ներսիսի վարքին³ Հայոց կը ներկայացուի. «Ապետունիք, Մամիկոնիք, Խորխոռուիք, Արծրունիք» այսպէս անշատ անշատ:

զ. Բարգէն կաթողիկոսի Ա. թղթին մէջ, որ գրուած է 506ին, ժամանակակից իշխաններէն կը յիշուին. «Վարդ Մամիկոնեան, Սահակ Կամսարական Արշարունեաց տէր, Սպանդիատ Հայոց ասպետ, ԱՐՏԱՇԻՐ Հայոց մախագ»⁴: Իսկ նոյն կաթողիկոսին Բ. թղթին մէջ իշխատակուած է «յԱրտաշէ մաղխագէ»:

է. 554 մարտ 29ին ի Դուին գումարուած ժողովին մասնակցող աւագ նախարարներէն մին է «ԳԱՐՁՈՅԼ Հայոց մախագ»⁵:

Յաջորդ ժամանակի պատմագիրներուն Յանձնաթիւ կը մնայ մաղխագութիւնը. Սեբեոս, որ կը յիշէ 590—640 շրջանէն թէ ողորոս եւ վահան Խորխոռուիները, չ'անուաներ զանոնք մաղխագութեան տիրոջով: Նոյնպէս Եղիշէ, որ յաճախ կը խօսի Խորխոռուիներու մասին (տե՛ս «ի տոհմէն Խորխոռուեաց Գաղիչոյ անուն», 32. զիշխանն Խորխոռուեաց գործք իւրովք, 57. իշխանն Խորխոռուեաց

² Սոփերք հայկականք, 2., էջ 132:
³ Անդ, էջ 32:
⁴ Գիրք թղթոց, էջ 42 եւ 48:
⁵ Անդ, էջ 74:

Խորխոռուեաց Գաղիչոյ անուն, 71. Խորէն Խորխոռուեանի, 77, 90, 93, 117) զարմանալի կերպով եւ ոչ անգամ մը առնթեր կը զնէ մախագ յորջորջանքը, թէպէտ եւ Ղ. Փարպեցին է եղած հոս իւր (այս ինքն իմբագրին) աղբիւրը: Ինչո՞ւ այս խուսափումը Եղիշէի քով: Ինձ կը թուի թէ 554էն ետքը բարձուեցաւ այս տիրոջը Խորխոռուեաց իշխաններէն. այս պատճառաւ ալ է. դարուն, երբ կը խմբագրուէր Եղիշէն, խմբագրչին անիմախարհեցած է «մաղխագ» եւ զանց առած է: Նոյնպէս անհասկանալի եղած է յորջորջումս Մովսէս Խորենացոյ, որ մաղխագը անուն ըմբռնած է եւ Խորխոռուեաց համանուն նահապետ մը հնարած է. Խորենացոյ տողերն են. վաղարշակ թիկնապարհա իւր (կարգէ), զինու հանդերձ, ի գաւակացն Խոռայ հայկազնոյ, արս ընտիրս եւ քաջս, նիզակաւորս եւ սուսերաւորս եւ գլուխ նահապետութեան նոցա զՄաղխագ ոմն այր բարի եւ սրտեայ» (Բ. 7): Գիտէ նաեւ «զԳարջոյլ Մաղխագ նահապետ Խորխոռուեաց (Գ. 9): Խորենացին, որ չի գիտեր «մաղխագ», «մաղխագութիւն» որ չի գիտեր «մաղխագութիւն» իմաստը եւ կը ներկայացնէ իբրեւ գլուխ Խորխոռուեաց տոհմէն կազմուած այլընտիր նիզակաւոր եւ սուսերաւոր թիկնապահներու⁶, գործակալութիւն մը, որ ինչպէս հին Պարսից, նոյնպէս հին Հայոց քով հազարապետին ի հազարապետութեան յատուկ էր, կ'ընձեռէ մեզ սպացոյց թէ Ձ. դարէն շատ ետքը պէտք է եղած ըլլայ Հայոց պատմութեան հեղինակը, ժամանակ մը, երբ մաղխագութեան պաշտօնը մատնուած էր մոռացութեան:

Նկատելի է, որ նաեւ Ազաթանգեղոսի յոյն թարգմանչին ալ, 572էն քիչ յետոյ, անխմանալի մնացած է մաղխագութեան իմաստը եւ չ'գտնելով յունարէն համազօր մը, տաւառացի փոխադրած է, համարելով նախարարութեան մը տոհմանունը:

Ինչպէս հիներուն Ձ. դարէն ետքը, նոյնպէս այսօր մեզի թաքուն կը մնայ մաղխագ յորջորջանքի նշանակութիւնը: Բառին ստուգարանութիւնը անձանթ է. Լազարով⁷ «սեմական կերպարանք» կը տեսնէ անոր վրայ:

⁶ Ալիշան՝ Հայաստանում, Բ., § 161, ծան. 2. կը գրէ այս իմաստով. «Մաղխագի պաշտօնն կամ պախիւն էր թիկնապահութիւն թագաւորի, երբ aide de camp»: Հմմտ. եւ Այրարատ, 421:
⁷ Հմմտ. Չ. Յ. Տաշեան, Ազաթանգեղոս, էջ 68, ծան. 1:

Ասկէ կը փորձուի Ն. Ադոնց⁸ ասորերէն՝ ինձ անձանօթ՝ malxazu բառին հետ համեմատել, որուն արմատը արարական melike կը համարուի. եւ որովհետեւ մաղխազութիւնը թոր-խոռունեաց տոհմին սեպհական տիրոջ մըն է, իմաստ կ'առնէ «տեսուչ, իշխան, թագաւոր»: Արմատը կը տեսնէ Ադոնց հայերէն աղխ եւ վրացերէն ախլի «տուն» բառերուն մէջ, որոնցմէ ծագած կը համարի նաեւ աղախին:

Եթէ գոյութիւն ունի ասորերէնի մէջ մաղխազու բառը՝ անհնգուած արարերէն մեղիք բառէն, դժուարաւ կրնայ համեմատութեան առնուիլ հայերէն մաղխազի հետ, որ շատ հին բառ կ'երեւայ: Ինձ կը թուի մաղխազ, մաղխազութիւն պետական աւագ դորձակալութեան մը յորջորջանքն է, որ հազարապետութենէն ետքը երկրորդ պատուաւոր բարձն եղած կ'երեւայ, եւ տոհմային ժառանգութիւնն է թորխոռունեաց իշխաններու կամ տանուտէրերուն: Թերեւս եղած ըլլայ տիրոջը Հայաստանի երեւմտից պաշտօնէին եւ կամ գլխաւոր մաքսապետին. այս իմաստը կը թերադրեն հետեւեալ տեղիքները, զորոնք յիշեցի արդէն անգամ մը վերը. Գարջոյլ մաղխազ կ'ուղարկուի Վաղէս կայսեր, ապա Շապուհ թագաւորին բանակցելու պետական կարեւոր հարցերու մասին, երկրորդ դէպքին մէջ յատկապէս Հայաստանը ենթարկելու Շապուհի գերիշխանութեան՝ հարկատուութեամբ: Գաղիչոյ մաղխազ կ'ամբաստանէր Պերոզի առաջ Գիւտ կաթողիկոսը թէ առեւտրական յարաբերութիւններ կը մշակէ Յունաց հետ: Եթէ ուղիղ է թէ մաղխազները երեւմտից կամ մաքսի վրայ հսկող գործակալներ են, կարելի է կաղմութիւնը ենթադրել մաղ եւ խազ բառերէն, այս ինքն մաղ = մախ եւ խազ «պահանջող» (հմմտ. դատ-սախազ), ուստի մաքսապահանջ. կամ մաղ = աւետ. malxšti «ինչք, մեծութիւն» եւ խազ «գիր» (խազ-եմ, գրեմ, խազտետ), ուստի «գրող ստացուածոց», դպրապետ:

Հաւանորէն իբր 546—556ին, երբ հազարապետութիւնը, դատաւորութիւնը եւ հարկահաւաքութիւնը առնուեցան հայերէն եւ յանձնուեցան պարսիկ գործակալներու, դադրեցաւ նաեւ մաղխազութիւնը:

Ուշագրութեան արժանի է, որ մաղխա-

⁸ Н. Адонцъ, Армения въ эпоху Юстиниана. С. Петербургъ, 1908, էջ 400:

գութեան դադրելէն ետքը հրապարակ կու գան հելլենարան դպրոցի հրատարակութիւններու մէջ մաղխազ, մաղխազութիւն բառերը (Փիլոն) ցոփ, ցոփութիւն (յն. μάχλος, μαχλοσύνη) իմաստով, որոնք դասական շրջանին, երբ գոյութիւն ունէր մաղխազութիւնը իբրեւ պետական գործակալութիւն մը, անձանօթ էին:

(Շարունակելի:)



ՎՐԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

«Զի թէպէտ եւ եմք ամու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոյժ անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս եւ արժանի գրոց յիշատակի...»:

Մեր պատմաճօր, Մովսէս Սորենացու այս գողտրիկ եւ անկեղծ խօսքերը, հաւասար իրաւունքով, իրենց պատմութեան սկիզբը կարող են դնել մեր բազմադարեան հարեւանները, Վրացիք եւս:

Պատմութիւնն ինչպէս եւ ամէնօրեայ իրական կեանքը ցոյց է տալիս, որ որքան աւելի՝ ազգերը եւ մանաւանդ հարեւան ցեղերը միմիանց ուսումնասիրում են եւ լաւ ճանաչում, այնքան աւելի կէտեր են գտնում վիճակակցութեան, այնքան աւելի զարգանում է նրանց մէջ համերաշխութեան զգացմունքն եւ միաբան գործակցութեան պէտքը: Այսպէս է մանաւանդ հայերի եւ վրացիների համար որոնք 25 դարից ի վեր վրացիներ են եղած եւ սերտ յարաբերութիւններ են ունեցած: Երկու երկիրների մէջ էլ քաղաքական անցեալ կացութիւնը միեւնոյն պարագաներում է ընթացել: Մինչեւ քրիստոնէութեան մուտքը թէ Վրաստան եւ թէ Հայաստան իրենց սեպհական թագաւորներով են կառավարուել: Այնուհետեւ երկու երկիրներն էլ միեւնոյն ժամանակ օտարների համար կուրի

դաշտ են դարձել, միեւնոյն թշնամիների լուծն են կրել, նոյնպէս աւերի են ենթարկուել եւ նոյնպիսի անիշխանական շրջաններ են ունեցել: Սակայն երկու երկիրներն էլ միշտ յամառօրէն մաքառել են իրենց ազատութեան եւ նոյն իսկ գոյութեանը համար: Մի ուս պատմագիր հիացմամբ է խօսում վրացի եւ Հայ ժողովուրդների այս առկուճութեան եւ հոգեկան ոյժի մասին, որի շնորհիւ նրանք դիմացել են այդ մըրրիկներին եւ միմեանց յաջողող օտար արշաւանքներից եւ աւերումներից յետոյ, նորից ոտքի են կանգնել, նորից աշխատել եւ այս կերպով մինչեւ այսօր կարողացել են պահպանել իրենց ազգութիւնն եւ ինքնուրոյնութիւնը, իւրաքանչիւրն իր պատմական հայրենիքում¹:

Հայոց պատմութեան մէջ շատ բան կայ գրուած Վրաստանի եւ վրացիների վրայ, եւ «թէեւ ոչ մի հայ պատմագիր վրաց պատմութեամբ ex professo չէ զբաղուել», ասում է ակադէմիկոս հայագէտ Բրուսէ, Վրաստանի պատմութեան այս առաջին եւ մեծագոյն հետազոտողը, «բայց հայ պատմագիրներն այս նիւթի վրայ գրածները շատ դրական են եւ իրականութեան անհերքելի դրոշմն են կրում»:

Վերջին տարիները եւրոպացի հեղինակներ մեծ ուշադրութիւն են դարձրած Վրաստանի եւ առ հասարակ վրացի ժողովրդի տանի եւ ներկայի վրայ: Նանսէն, սկանսնցեալի եւ ներկայի վրայ: Նանսէն, սկանսնցեալի այս մարդասէր գիտնականն, որ Հայաստան էր գնացել Ազգերի Միութեան յանձնարարութեամբ եւ ամբողջովին նուիրուած էր հայանպաստ գործի, անցել ու տեսնել է Վրաստանը: Եւ նա գրում է. «Վրաստանը արեւելեան ասպետութեան երկիր է: Նա հռչակուած է իր բարեկրթութեամբը, ուղղիկների քաջութեամբն եւ կանանց գեղեցկութեամբը: Վրացի ժողովուրդի պատմութիւնն էլ այնքան նշանաւոր է որքան իր երկիրը: Նա ստիպուած է եղել գրեթէ անընդհատ պայքար մղել իր ազատութեան համար: Վրացիք մօտ երկու հազար տարի շարունակ սեպհական արքաների երկար շարք են ունեցած...»²: Նոյն վկայութիւնն է տալիս նաեւ մի մեծ արեւելագէտ, որ ընդարձակ

հետազոտութիւններ ունի կատարած Կովկասի ժողովուրդների ծագման վրայ. «Վրաստանի թագաւորութիւնը իր պատմութեան շրջանում գեղեցիկ էջեր ունի, էջեր, որոնք ապացուցանում են թէ Գարթվէլները (Վրացիք) մեծ ջանքեր են գործ դրած իրենց անկախութիւնը պահելու համար»³:

Հայ հասարակութիւնը, մանաւանդ Կովկասի սահմաններից դուրս ապրող հայութիւնը, աննշան բացառութեամբ, շատ քիչ եւ շատ թերի ծանօթութիւն ունի Վրաստանի եւ վրացիների, մեր այս բազմադարեան հարեւանների վրայ: Ուստի այս պակասը լրացնելու նպատակով է, որ ես յանձն եմ առած գրել այս պատմութիւնը. «Վրաստան եւ Հայերը» խորագրով, որ տեղ պիտի պարզեմ այն յարաբերութիւններն, որ գոյութիւն են ունեցել երկու դրացի ժողովուրդների մէջ 25 դարերի ընթացքում:

Ցոյց տալու համար թէ որքան կարեւոր, շահեկան եւ սերտ են եղած այս յարաբերութիւնները, ես հարկ եմ համարում կանխօրէն յառաջ բերել ստորեւ նրանց գլխաւոր ցայտուն դիժերը:

Ա. Այն բոլոր մանր ցեղերի մէջ, որոնք յաջողել են մինչեւ այսօր պահպանել իրենց ինքնուրոյն գոյութիւնը, եւ չեն ձուլուել վրացի աւելի ուժեղ տարրի մէջ, Վրաստանը այն միակ երկիրն է, որ կրել է Հայաստանի քաղաքական եւ բարոյական ազդեցութիւնը, անցեալում⁴:

Բ. Նախաքրիստոնէական վերջին դարում, երբ Վրաստան ու Հայաստան անընդհատ դրացիական յարաբերութիւնների մէջ էին, վրացիների հրաւերով, Հայոց թագաւորի որդին, Արշակը, թագաւոր է նստում Վրաստանի վրայ, եւ նրանով սկսում է Վրաց Արշակեան արքայական հարստութիւնը, որ 8—9 արքայ է տալիս Վրաստանին: Կարծես թէ սրա փոխարէն, 2 վրացի իշխան էլ տիրում են Հայաստանի դահին:

Գ. Հայաստան իր հարաւային դիրքի պատճառով յաճախ Վրաստանի համար պատուար է հանդիսացել օտար արշաւանքների

¹ Романовский, Очерки изъ Исторіи Грузіи. Тифлисъ 1902, էջ 47—48:
² F. Nansen, L'Arménie et le Proche Orient. Paris 1928, էջ 90:

³ J. de Morgan, Recherches sur les origines des peuples du Caucase, նոյնը՝ Histoire du peuple arménien, Paris 1919, էջ 289:
⁴ Բրուսէ գրում է «Les Arméniens dans l'antiquité avaient sur la Géorgie une influence politique et morale, historiquement prouvée». M. Brosset, Histoire de la Géorgie, St. Pétersbourg 1840. Première partie, f. 84.